Գ. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 21 ՆՈՅԵՄԲԵՐ 1898 ԹԻՒ 89

ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 տարեշրջանի
Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆրանք
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եւայլն ղրկել հետեւեալ հասցէով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՒՈՒՆՔ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ „Иравункъ" ВАРНА (България).

Rédaction du journal „Iravounk" VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ետ չեն ղրկուիր եւ յարմար դատուածները միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ։
Ծանուցման տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լինի, փոխարէնը կանխիկ։

ԽԶՈՒՄԸ

Մեր վերջին տարիներու աղէտները, որոց վրայ ամենքս ալ կսկծագին կողբանք, անուրանալի է որ իրենց նիւթական և բարոյական վնասներուն հետ օգուտներ ալ ունեցան, զորս պէտք չէ տեսութենէ կորսնցնել, այլ յաճախ մատնանիշ ընել, որպէսզի մեր կացութիւնը մեզի բոլորովին անմխիթար, յուսահատական չերեւի։

Այդ օգուտներէն, որոնք բարոյական կարգէ են, մէկը և գուցէ ամենագլխաւորը այն բարոյական ահագին անջրպետն է զոր կոտորածները բացին հայ և թուրք տարրին միջեւ և որ մեզի սակէ ետքը հեռի պիտի պահէ, գոնէ մասամբ, Թուրքիոյ մէջ տիրող տարրին հետ մեր երբեմնի չափազանց մերձեցումէն յառաջացած ապականութիւններէն։

Ճշմարտութիւն մըն է որ այն քրիստոնեայ ազգերուն մէջ, որոնք թուրք տիրապետութեան լուծին տակ ինալու անասելի դժբաղդութիւնը ունեցած են, հայը ամենէն աւելի յաջողած է իր բընական ճարպիկութեամբ մերձենալ իր քաղաքական տիրոջ, չարունակ չփուիլ և ամենէն սերտ յարաբերութիւնները հաստատել անոր հետ, որքան կարելի է՝ հանգիստ ապրելու և հարստանալու ակնկալութեամբ։

Հայուն այս ձգտումը իրագործուած էր իսկապէս։ Այն նիւթապէս նշանաւոր դիրքը զոր հայ տարրը կրցած էր մինչեւ վերջին կոտորածներու ժամանակ ձեռք ձգել Թուրքիոյ մէջ, կը պարտէր, գէթ մեծագոյն մասամբ, իր այն ջանքերուն զոր անընդհատ ըրած է Թուրքին մասնաւոր բարեացակամութիւնը շահելու համար և որոց մէջ իրեն չափ ուրիշ ոչ մէկ քրիստոնեայ ժողովուրդ կրցած էր յաջողիլ։

Հայ անհատին այս յաջողութիւնը սակայն իսկապէս, բարոյական տեսակէտով, կատարեալ դժբաղդութիւն մը եղած է իրեն և ազգին համար։

Մեր տգէտ, կրօնամոլ և բարբարոս տիրոջ հաճոյանալու միակ ճամբան մեզի համար, բնականաբար, անոր առջեւ միշտ սորկօրէն քծնիլ, չարունակ անխղճօրէն ստել և զայն շողոքորթելն էր անդադար։

Հա՞րկ է ըսել թէ մեր այս դիրքը թուրք տարրին հանդէպ դարերով չարունակուելով ի՛նչ աղետալի ներգործութիւն ըրած է մեր նկարագրին և բարքերուն վրայ։ Ոչ միայն ստրուկին յատուկ յոռի նկարագրով վարակուեցանք, այլ և թուրքին հետ մեր արտասովոր մերձեցումով, ժառանգեցինք անոր ընկերական, ընտանեկան և այլ բարքերուն շատ, յոռի կողմերը։ Չափազանցութի՞ւն մը կըլլայ արդեօք ըսել թէ բարոյական խնամութիւն մը հաստատուած էր հայուն և թուրքին միջեւ և այնքան մեծ՝ որքան կարելի էր երեւակայել այլակրօն և մոլեռանդ տիրոջ և իր գերիին միջեւ։ Չէ՞ որ հայ ազգին հաւատարմութիւնը օսմանեան գահին հանդէպ առածի կարգ անցած էր երբեմն իրաւամբ։ Չէ՞ որ տակաւին չուրջ քսանհինգ տարի առաջ, մինչդեռ ուրիշ քրիստոնեայ տարրեր արդէն ազատած էին և ոմանք ազատելու ջանքեր կընէին թրքական լուծէն, ոչ հայ ժողովուրդը մաքէն կանցընէր ուրիշներու նման թօթուել իր գերութեան շղթաները և ոչ թուրքը կրնար երեւակայել թէ իրեն հետ դարերով ապրելու վարժուած, իր բարեացակամութիւնը և շնորհները վայելող, հաւատարիմ հայ ժողովուրդ կարող է օր մը ազատութեան ձգտումներ ունենալ։

Պէռլինի դաշնագրին կնքումէն ի վեր սակայն իրերը փոխուեցան։ Հայը սկսաւ զգալ իր վիճակին ծանրութիւնը և թուրքը՝ վերցնել իր վստահութիւնը անոր վրայէն. տակաւ պաղեցան երբեմնի սերտ յարաբերութիւնները և վերջապէս կոտորածները եկան մշտնջենապէս լուծել նախկին բարոյական խնամութիւնը երկու տարրերուն միջեւ։

Այս խզումը, բարոյապէս, մեծ շահ մըն է մեզի համար, թէեւ նիւթապէս ունենայ իր վնասները։ Նիւթական շահէ տարբեր բաներ ըմբռնելու. անընդունակ դարձած ուղեղ մը ունենալու է՝ չհասկնալու համար թէ լաւագոյն է մարդուս համար ունենալ ընկերական ամենահամեստ դիրք մը՝ պահելով իր մարդկային արժանապատուութիւնը, ազնիւ նկարագիր մը քան բարձրագոյն դիրքերու հասնիլ բարոյապէս տուժելով։

Անշուշտ սակէ ետքն ալ հայը պիտի ստիպուի քծնիլ ու ստել, քանի որ պիտի ապրի Թուրք բռնապետութեան ներքեւ. սակայն այդ պիտի ընէ նուազ չափով մը, ոխը սրտին մէջ, ակամայ և ոչ յօժարութեամբ առաջուան նման, և եթէ, ինչպէս յուսալի է, Եւրոպա ստիպէ Եըլտըզ Քէօշկը քիչ շատ բարենորոգումներ ներմուծել երկրին վարչութեան մէջ, տարակոյս չի կայ որ հայը իր առեւտրական ճարպիկութեամբ և իր ճակտին քրտինքով պիտի կրնայ դարձեալ իր ապրուստը ճարել առանց վայելելու թուրքին նախկին մասնաւոր բարեացակամութիւնը, և առանց անոր հետ ունենալու այն սերտ յարաբերութիւնները որոնք այնքան սուղ նստած են մեզի։

Յ. Պ.

Ի՞ՆՉ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈԳԻՈՎ ՆԵՐԹԵԼՈՒ ԵՆՔ ՄԵՐ ՏՂԱՔԸ

Մարդ իր բոլոր մտաւոր ու բարոյական կարողութիւններով արդիւնք է ժառանգականութեան, կրթութեան եւ միջավայրի, բայց մանաւանդ այս վերջի երկու ազդակներուն։ Առանց յուզելու այն խնդիրը թէ մենք որ աստիճան իրաւունք ունինք տղայոց մտքին ու հոգւոյն վրայ ազդելու, առանց Թոլսթոյի եւ իր հետեւորդներուն մանկավարժական արտառոց կարծիքներուն վրայ ծանրանալու, կրնանք հաստատապէս ըսել թէ, մանուկներու տուած մեր կրթութեամբ անոնց հոգին ու միտքը ահագին փոփոխութեան կենթարկենք։ Արդ, քանի որ ընկերական ու քաղաքացի մարդը կարգ մը ազդակներու արդիւնքն է, եւ քանի որ այդ ազդակներու էն զօրաւորը՝ կրթութիւնը, մեր ձեռքն է, մեր խղճի պարտքն է քննել թէ ի՛նչ տեսակ բարոյական ոգւով դաստիարակելու ենք մեզ յանձնուած տղաքը, որպէսզի լաւ արդիւնքի մը հասնինք, ընկերութեան զարգացման ոգւոյն եւ կեանքի պայմաններուն յարմար անհատներ պատրաստենք։ Մեծամասնութեամբ համբակ եւ իրենց պաշտօնի գիտակցութիւնը չունեցող մեր ուսուցիչներու թիւր կարծիքներն առանց նկատի առնելու, նախ ըսենք որ լաւ դաստիարակ մը ըլլալու համար շատ մը ծանօթութիւններու շտեմարան մը լինելու պէտք չէ, ոչ ալ իր պաշտօնը անթերի կատարած ըլլալու համար այդ ծանօթութիւններով խեղճ աշակերտներու ուղեղը բեռնաւորելու է։ Նախնական եւ երկրորդական կրթութեան նպատակը ոչ գիտուններ, ոչ լեզուագէտներ եւ ոչ ուրիշ մասնագէտներ պատրաստել է, այլ չափաւոր գիտական ու գրական ծանօթութիւններու միջոցաւ տղուն մտաւոր ու հոգեկան կարողութիւնները զարգացնելն է։ Ահա այս պատճառաւ է որ դպրոցներու մէջ աւանդուած իւրաքանչիւր ուսում՝ էն վերացականէն սկսած էն գրականը, կրկին նպատակներու կը ձգտի, առաջինն է տղուն այլ եւ այլ ծանօթութիւններ հաղորդել, իսկ երկրորդ եւ գլխաւոր նպատակն է այդ ծանօթութիւններու միջոցաւ անոր մտաւոր ու հոգեկան կարողութիւնները զարգացնել։ Ուսուցիչ մը որպէսզի իր տուած ամէն մէկ դասը այդ կրկին նըպատակներուն կարենայ ծառայեցնել, պէտք է գիտնայ նախ թէ տղուն մտքի եւ հոգւոյն կարողութիւնները որո՛նք են եւ ի՛նչպէս կը զարգանան, երկրորդ նկատի առնելով շատ մը պայմաններ, ինչպէս տղայոց ընկերական վիճակը, միջավայրը, ներկայ յառաջդիմութեան ոգին եւ այլն, պէտք է որոշած ըլլայ իրեն համար յայտնի բարոյական ուղղութիւն մը եւ այդ ոգւով միայն դասախօսէ։ Մեր մէջ ոչ միայն ուսուցիչներու մեծ մասը մանկավարժութեան այդ էական պայմանները չը յարգեր եւ միեւնոյն վարժարանին մէջ իւրաքանչիւրը տարբեր կերպով եւ ոգւով ազդելով տղոց վրայ՝ մէկզմէկու գործ կը խանգարէ, այլ շատեր նոյն իսկ իրենց աւանդած դասերու ոչ նպատակը գիտեն, ոչ ոգին ըմբռնած են։ Անոնք կը ջանան աւելի կամ նուազ բարբարոս միջոցներով տղուն միտքը շատ մը ծանօթութիւններու պարզ ընդունարան մը միայն ընել, այն էակին միտքը որ այդ հասակին մէջ ամենէն աւելի գործելու, զարգանալու, կերպարանափոխուելու տրամադիր է։ Երբ այդ ուղղութեամբ պատրաստուած աշակերտներ ստիպեալ մարդամեքենաներու դերը կառնեն, եւ թութակօրէն կը կրկնեն դասատուներու իրենց սովրեցուցած ծանօթութիւնները, մեծ մեծ բառերով եւ անբնական ոճով, մինչդեռ միամիտ ծնողներ, իրենց զաւակներու մտքով ու հոգւով նահատակուելուն ան-

գիտակ՝ կ'ուրախանան որ իրենց որդիք շատ բան կը կարդան, չորս հինգ լեզու կը սորվին, գիտական, գրական ու գործնական կրթութիւն մը կ'ստանան, անդին հասկցողները, տղուն մըտաւոր եւ հոգեկան կարողութեանց զարգացման օրէնքները գիտցողները, կ'ողբան այդ բարբարոս չարչարանքները, եւ մտաւոր ու բարոյական մահացման մատնուած խեղճ, անմեղ արարածները, եւ արդար ցասումով կը լեցուին անոնց դահիճ դաստատուներուն դէմ։ Ուրախ ենք յայտարարելու թէ Վառնայի ազգային երկսեռ վարժարաններու ուսուցչական խումբը իր շաբաթական ժողովներու մէջ, որոշած է նախ թէ ի՞նչ բարոյական ուղղութեամբ կամ ոգւով կրթուելու են մեր տղաքը, անոնց ընկերական, ազգային ու քաղաքական կեանքի ու միջավայրի պայմանները նկատի առնելով, երկրորդ՝ պարզաբանած է թէ տղուն հոգեկան ու մտաւոր կարողութիւնները որոնք են եւ ի՞նչ օրէնքներով կը զարգանան, եւ վերջապէս իւրաքանչիւր աւանդուելիք ուսման յարմար մէթոտներ ընտրելով սկսած է իր գործին։ Այսպէս ամէնքէն ընդունուած որոշ բարոյական ուղղութեամբ մը, տղոց մտաւոր ու հոգեկան կարողութիւնները յայտնի օրէնքներու համեմատ զարգացնելու համար, իւրաքանչիւր ուսում յարմար մէթոտներու համեմատ կը դասախօսուի։ Ուրեմն ամէն մէկ ուսուցիչ իր աւանդելիք ուսումը լաւագոյն եղանակ տղայոց սորվեցնելով հանդերձ՝ իր միւս պաշտօնակիցներու հետ համերաշխ գործունէութեամբ, եւ որոշ ուղղութեամբ մը տղոց մտաւոր եւ բարոյական կարողութիւններն ալ կը զարգացընէ, որ իւրաքանչիւր դասի էն էական ու կարեւոր նպատակն է։ Որովհետեւ աւանդուելիք դասերու բարոյական ուղղութիւն մը, ոգի մը տալը ամենէ աւելի դժուար եւ հետեւանքներով ամենէ աւելի ծանրակշիռ գործն է, ես պարտք կը համարիմ Վառնայի ազգային վարժարաններու ուսուցչական խումբէն ընդունուած բարոյականի ոգին հոս պարզաբանել, որպէսզի դիտողութիւն ընել ուզողները հրապարակաւ յայտնեն իրենց կարծիքները այդ մասին եւ օգտուիլ ուզողները օգտուին։

Կ. Պէօճ

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԶԻՆԱԹԱՓՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(2)

—«Ես, ասով մէկտեղ, դէմ կ'ելնեմ այն կարծիքին զոր կը ջանան ներկայացնել ճիշդ այնպէս, որ զինումներն հաստատապէս պիտի մաշեցնէին ազգերն։ Այս նախադատութիւն մ'է կամ թէ իրական սխալ մ'է։ Եւ ստուգիւ, հիմակուան պէս, բնաւ երբեք այնքան չափն անցուցած չեն եւրոպական զանազան տէրութեանց զինումներն։ Որովհետեւ հասարակաց հարստութիւնն ալ, ոչ հիմակուանէն աւելի, ոչ ալ ա՛յնքան մեծ եղած չէ։ Երբեք ժողովրդոց հանգըստութիւնն աւելի մեծ եւ աւելի լայնածաւալ եղած չէ...։ Սակայն եւ այնպէս, եթէ աիեզերական զինուորական պարտաւորիչ ծառայութիւնն խափանուէր՝ թերեւս անով միջոց մը գտնուէր բարօրելու ընդհանուր կացութիւնն, յայտնի միջոցաւ մը, ծառայութեան ժամանակն աւելի եւս նուազեցընելով միջազգային կարգադրութիւններով։ Այս դարաշրջանի մէջ, զինուորական ծառայութիւնն իջաւ 12 եւ 10 տարիէն մինչեւ 2 եւ 3 տարուան։

Հաւանաբար, յառաջիկայ տարեշրջանի մէջ պիտի իջնայ՝ 1 տարուան, 1 1/2 տարուան։ Բայց մի ընդհանուր զինաթափութեան վրայ վստահիլն՝ պիտի նշանակէր մտացածին հաշիւ մ'անել...։

«Անչուշտ տեղի պիտի ունենայ Զարէն առաջարկուած կոնֆէրանցիան։— Հոս պիտի վիճաբանին եւ պիտի ճառախօսեն, բայց մէկ բանի ալ չը պիտի յանգին։ Ֆորմուլներու արուեստին վարժ եղող դիւանագէտները պիտի գտնեն սոյն կոնֆէրանցիայի մէջ այնպիսի ֆորմուլա մը, որ պիտի թողուն ոչնչացնել իրենց խորհրդակցութիւններն ամբողջ ֆորմուլայով մը, որը, թերեւս, պահ մը զիրենք պիտի խաբէ։

«Ես, նախապէս կոնֆէրանցիայի կատարելիք գործի ունայնութիւնն յայտարարելու համար, կը յենուիմ այս կրկնակ իրողութեան վրայ. այն է թէ՝ Անգլիա հաստատապէս պիտի մերժէ իրեն համար աղէտալի եղող դիւանագիտական կարգադրութիւն մը հաստատել, եւ Ֆրանսա զայն պիտի ընդունէ միմիայն ձեւի համար։ — Անգլիա պիտի մերժէ՝ վասնզի ամէն ոք գիտէ թէ Ռուսիա միայն ցամաքի վրայ կ'առաջարկէ զինաթափել որպէսզի աւելի լաւ կարողանայ զինուիլ ծովու վրայ։

«Այն խնայողութիւններով զորս նա պիտի կատարէ՝ իր զօրաց իսկական ուր գաղթականների վերադարձից յետոյ աւելի շատացել է ժողովրդի կարօտութիւնը եւ թեմի ծխական ցուցակների համաձայն, 2,250 որբ կայ։ Որբանոցի տեղ ընտրված է ամենահին վանքերից մին—Ս. Աստուածածնի Քաղցրահայեաց վանքը։ Ցոյս կայ, որ, բարի մարդկանց համակրութեան շնորհիւ, կարելի լինի տարվայ վերջին բանալ եւ երկրորդ հայ-ռուսական որբանոց, որովհետեւ վերջին ժամանակներս շատացել են այն նուէրները, որոնք սացվում են «Եղբայրական օգնութեան» երկրորդ հրատարակութեան վաճառումից։

(*) Այն նամակը կովկասահայ թերթերը Ռուս. Վեհ. ի թերթէն արտատպած են։

ԹՈՒՐՔ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր բարեկամներէն Պ. Սուին հոս գալու համար գերմանական չոգենաւով ճամբորդած միջոցին, Պոլսոյ քարտէրին մօտ, անգամ մ'ալ կը ճաշակէ Թուրք կառավարութեան նորօրինակ մէկ ծայրայեղութեան փորձն, որ ուշագրաւ պարագայ մ'է։

Ամենուս հաւատքը մինչև ցարդ այն եղած է թէ թուրք ոստիկանութեան համար անրջնարարելի է օտար դրօշի մը ներքեւ գտնուող նաւը եւ անոր մէջինները, բայց ինչպէս կ'երեւի հետեւեալ պարագայէն, Պոլսոյ մէջ գործերը նոր կերպարանք մը առած են, եւ դէպի եւրոպական դրօշը թուրքերու ունեցած ակնածանքին աստիճանը իջած է։

Մեր բարեկամին ճամբորդած չոգենաւը հապա թէ քարտէրին կը մօտենայ, այնտեղի ոստիկանապետը մէկ քանի ծպտեալ ոստիկան հետեւորդներու ընկերակցութեամբ շոգենաւ ելլելով կը մօտենայ մեր բարեկամին, եւ կսկսի հարցուփորձել ով ըլլալը եւ ուր երթալը։ Պ. Սուին կը մերժէ պատասխանել իրեն. ասոր վրայ ոստիկանապետը — ապահովաբար մատնութեան մը հետեւանքով — զինքը անունով, մականունով, ուրկէ եկած եւ ուր երթալը կը յայտնէ, եւ կսկսի կէս մը սպառնական շեշտով, կէս մ'ալ փաղաքշանքով հրաւիրել զինքը որ դուրս ելլէ, ինչ որ Պ. Սուինի կողմէ կը մերժուի։ Ոստիկանապետը կը դիմէ Ա. Նաւապետին խնդրելով որ դուրս հանուի այդ ճամբորդը. Նաւապետին կողմէ ալ կը մերժուի. ասոր վրայ նաւուն մէջ պահակ ոստիկան մը դրուելով՝ հսկողութեան ներքև կ'առնուի Պ. Սուին մինչև նաւուն մեկնիլը և ոստիկանապետն ալ մերթ ընդ մերթ կ'այցելէ նաւը, չորս կողմը աչքէ անցնելու համար։

Ուրախ ենք որ մեր բարեկամը կրցած է աժան ազատիլ թուրք բռնակալութեան այս լիրբ յանդգնութենէն, ինչ որ աւելի Ա. Նաւապետին մարդասիրութեան մէկ արդիւնքն է քան թէ գերմանական դրօշին թուրքիոյ մէջ վայելած յարգանքին։

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՈՑ

Գարտիֆի մէջ գումարուած հայկական միլիթինկին առթիւ հրատարակուած տետրակէ մը տեսնուած է թէ մինչեւ ցարդ Անգլիոյ մէջ Հայոց համար հաւաքուած գումարը կը հասնի 175000 անգլ. ոսկիի։ Իսկ Կ. Պոլսոյ կեդրոնական Նպաստամատոյց յանձնաժողովը՝ ընդ նախագահութեամբ Սբր

Թիւն եւ իր ցամաքային զինուորները կիսով կամ երկու երրորդով նուազեցնելով, ըստ այն պայմանագրութեան որ պիտի կատարուէր միջազգային կարգադրութեամբ, Ռուսիա պիտի կերտէր սոսկալի նաւատորմ մը Մեծն-Բրիտանիոյ նաւատորմին դէմ ոգորելու համար։ Ուրեմն բնական է, թէ այս վերջին տէրութիւնն չը պիտի ուզէ զինաթափութեան մասին խօսք մ'իմանալ։ Ֆրանսայի գալով պիտի ասեմ թէ սա միայն ձեւի համար պիտի լրծակցի ռուսական առաջարկութեանց, իբրեւ Ռուսիոյ դաշնակից՝ ուրիշ կերպ չկարենալով անել։ Բայց նա պիտի յարմարի բոլորովին զինաթափ չը լինելու համար, այլ ընդհակառակն աւելի եւս զինուելու համար։ Եւ զարմանալի բան մը չը պիտի լինի այս, Ֆրանկո-Ռուսական դաշնակցութիւնն, ի սկզբանէ, կը հանգչի հոմաքանութեան մը վրայ։ Ֆրանսա զայն կնքեց Գերմանիոյ համար, մինչդեռ ստորագրած ժամանակ մտածեց միմիայն Անգլիան։ Ռուսիա կարծեց երկար ժամանակ որ իր իսկական դիտաւորութեանց վրայ զգուշաւոր կասկած մը վերագրել տալն լաւ քաղաքականութիւն էր։ Բայց նա, այսօր ալ ժամանակն եկած համարեց փարատելու համար այն բոլոր երազներն։ Անկարելի է, որ Ֆրանսան ազգարարուած չը լինի այս առթիւ։ Հետեւաբար, որոշելով իր քաղաքականութեան նպատակն, Ռուսիա լրջօրէն չը պիտի կրնար ուզել զինաթափութիւնն՝ որ իրեն հակառակ պիտի լինէր։ Այս միանգամայն յայտնի բան մ'է»։

Ոչ միայն Պ. դը Հարտման չը հաւատար զինաթափութեան մը հնարաւորութեան վրայ, այլ նաեւ կը կարծէ, թէ հնարաւոր զինաթափութիւնն իսկ ըղձալի չէ։ Նա կը յայտնէ վերջապէս այն կարծիքն, որ Եւրոպան պէտք է զինուի՝ կազմելու համար մաքսային ընկերութիւն մը, որ զինաթափութենէն ա՛լ աւելի ազէկ պիտի պահպանէ խաղաղութիւն։ Այս ընկերութիւնն պիտի ուզղուի ընդդէմ Անգլիոյ՝ որուն գաղթային կայսրութեան ազդեցութիւնն կը սփռի երկրագունտիս երկու երրորդ մասին վրայ, եւ ընդդէմ Ռուսիոյ՝ որ իր սահմաններուն վրայ չինական պատնէշներ կը բարձրացնէ եւ կը ձգտի իրմով զոհանալ, ոտնակոխ անելով օտար ինտուսդրիան եւ վաճառականութիւնն։ Իսկ՝ թէ այս ընկերութիւնն կարենար մշտնջենական խաղաղութիւնն երաշխաւորել... ինչպէս կը կարծէ յարգելի փիլիսոփան։

Ակարի

ՎԵՐՋ

Ճ. Ռուիդըլի, ստացած է 224000 անգլ. ոսկի հետեւեալ կերպիւ.
Ամերիկայէն և Եւրոպաէն 128000
Անգլիայէն ու Իրլանտայէն 65000
Սկովտիայէն 15000
Հայերէ 16000

Ցիշեալ տետրակի գլխաւոր մասերը Նոր Կեանք արտատպած ըլլալով մենք զայնս կը համառօտենք միայն։

Արկայլի և Ուէստմինիստրի դուքսերուն նախագահութեան տակ 1895ին կազմակերպուած «Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողով»ը՝ համոզուելով թէ անգլիական կառավարութիւնը անկարող կը գտնուի ի նպաստ հայոց դաշնագիրներով խոստացուած պաշտպանութիւնը ընել զօրել, կերպիւ և փրկել Հայերը թրքական վրէժխնդրութենէ, եռանդուն գործունէութեամբ մը Անգլիոյ մէջ հանգանակութեան ձեռնարկեց, որուն աջակցեցան Լոնտոնի Լորտ-քաղաքապետը ինչպէս նաեւ գաւառական քաղաքապետները։ Հանգանակութեան արդիւնքը հասաւ 101000 ոսկիէ աւելի գումարի մը, որմէ 12000ը Պուլկարիոյ հայ. գաղթականներուն ծախսուած է և մնացեալը յանձնուած է Կ. Պոլսոյ կեդրոնական Յանձնաժողովին. այս վերջինն ալ ագլ. հի պատոսներու և միսիօնարներու միջոցաւ փոքր Ասիոյ 20 կեդրոնատեղիներ ղըրկած է։

«Լոնտոնի Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողով»ը Տիկին Գալի նախաձեռնութեամբ 1895 Մարտին կազմակերպուեցաւ և ամիս մը վերջ սկսաւ նպաստներ հասցնել Հայաստանի խորերը։ Վանի մէջ արհեստանոցներ, փուռեր և ճաշարաններ բացաւ, 1896ին շրջակայ գիւղերէն և գաւառներէն փախչելով Վան ապաստանող 22000 հայերը ժամանակ մը սոյն Յանձնաժողովոյ նպաստովը կապրէին. իսկ գարնան երբ այդ գաղթականները իրենց գիւղերը կը վերադառնային, սերմնացու, գործիք բաշխուեցաւ և եզ փոխ տրուեցաւ իրենց։

Ցարդ գործը կը շարունակէ ամերիկացի միսիօնար Տր. Րէնոլտս, որ այժմ արհեստանոցը պրգտիկցուցած է և որբանոց մ'ալ բացած է, ուր հիմա 350 որբ կը խնամուին։— Այս ընկերութիւնը Տիգրանակերտ, Զէյթուն, Վան, Ուրմիա և ուրիշ տեղեր նպաստներ ղրկած է։

Ընկերութեան հաւաքած գումարի ամբողջութիւնը 16000 ոսկիի կը հասնի։

Տեղեկատու (Հայաստան) գրասենեակ, քարտուղար՝ Պ. Զ. Հէլտ։

Այս ընկերութիւնը կազմուած է 1895 դեկտ.ին նպատակ ունենալով Անգլիացիներուն համակրանքը շարժել ի նպաստ հայկական դատին վաւերական տեղեկութիւններ հրատարակելով ու տարածելով։ Սա հրատարակեց «Աղօթքի կոչ մը» անուն գործն՝ որ Եւրոպական տիրող լեզուներու և արաբերէնի թարգմանուեցաւ, և ուրիշ տետրակներ, որոնց մէն, Հայաստանի տետրակը 50000 օրինակ տարածուեցաւ։ 1896 մարտ 22ին Հայաստանի նահատակներուն համար հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել տուաւ Սէնթ Ճէյմս Հոլի մէջ, և յետոյ նմանօրինակ հոգեհանգիստներ տեղի ունեցան Անգլիոյ շատ կողմերը։

Այս գրասենեակի դրդումով Ուաշինկթընի եպիսկոպոսը օգոստոս 5ին խնդրագիր մը ներկայացուց Զարին ու Զարուհիին և երկու օր յետոյ՝ Մայր-թագուհիէն ալ ունկնդրութիւն մը ունեցաւ։ Ասիկա նպաստամատոյց ընկերութիւն մը չէ, բայց կը շարունակէ տետրակներ հրատարակել և պատրաստ է նորէն գործի սկսելու երբ առիթը գայ։

Հայաստանի բարեկամներու Միջազգային ընկերութեան մասին մենք ժամանակին տեղեկութիւն տուած ենք։ Սա 97 մայիս 19ին համաժողով մը գումարեց Լոնտոն, ուր ներկայ գտնուեցան Գերմանիաէն, Ֆռանսաէն, Զուիցերիաէն և Անգլիոյ զանազան կողմերէն ներկայացուցիչներ։

Բարեկամներու հայկական նպաստամատոյց Յանձնաժողովը 96ին կազմուեցաւ. 17,464 ոսկի հաւաքեց, և այս դրամը բաշխուեցաւ Պ. և Տիկին Հարրիսի ձեռքով Հայաստանի մէջ, վերմակ ու հագուստներ ղրկելով և այլն միջոցներով։

(Շարունակելի)

ԼՐԱՔԱՂ

—Գերման միսիօնարք Տիգրանակերտի մէջ նոր որբանոցի մը բացումը կատարած են, ընդունելով հարիւրի չափ որբեր։ Այս միսիօնարք արդէն որբանոց մըն ալ Եդեսիոյ մէջ հաստատած են։

—Կրօնափոխութեանց նոր և տխուր լուրեր կուտան մեզ Պոլսոյ թերթերն ու գաւառներէն եկած նամակներն։ Վանի Կըր-Դար թաղի ազգայնոց մէկ կարեւոր մասը արդէն կաթոլիկութիւն ընդունեց։ Ահա Մալաթիոյ Հէքիմ խան գիւղէն ալ 100 տուն հայերու կաթոլիկութեան դիմած ըլլալը այսօր հաստատուած իրողութիւն մըն է։ Վերջին անգամ Տէրէնտէէ ալ կը գրեն թէ Մուշովկայ 50 և Անսուր 30 տնւոր հայով կաթոլիկ ըլլալու կը միտին, որովհետեւ այս գիւղեր 5-6 տարիներէ իվեր քահանայէ զուրկ մնացած են։ Տէրէնտէի ուրիշ մէկ քանի նշանաւոր գիւղերն ալ քահանայ չունենալով եկեղեցիները փակուած կը մնան։

Պատրիարքարանը արդեօք այս դասալիք քահանաներո՞ւն ալ խօսք չի կրնար հասկընել որ հանդիսաւոր ուխտերնին յարգելով իրենց գիւղը վերադառնան։

—Բ. Դունէն Պատրիարքարան եկած ծանուցագիր մը յանձնարարած է որ ինչպէս առաջնորդները, նոյնպէս և առաջն. տեղապահներն, ասկէ վերջ արքունական հրովարտակով ընկուին իրենց պաշտօնատեղիները, փոխանակ կըրօնական և դատական գործոց նախարարութենէն յանձնարարական պաշտօնագիր խրկելու։

—Պոլրքեսէրի Գաւառ. Վարչութենէն Պատրիարքարան եկած տեղեկագիրն տեղւոյն հրդեհին նկատմամբ տխուր մանրամասնութիւններ պարունակելով, բազմաթիւ հայ ընտանեաց անպատսպար վիճակը կը նկարագրէ։ Պատրիարքարանը որոշած է հրկիզելոց կացութիւնը ներկայել կառավարութեան։

—Վանայ առաջն. տեղապահին դիմումին վրայ, Վարագայ և Կարմրուորի վանքերուն որբանոցներուն ի նպաստ՝ Հալէպի մէջ հանգանակութեան ձեռնարկուած և առաջին անգամին 60 ոսկի գոյացած է։

—Մշակի մէջ Վաղարշապատէն թղթակցութիւն մը տեսնուեցաւ, որ նոյն գիւղի մէջ կոյգ մը եզ գողցուած ըլլալը տեղեկացնելէ վերջ կըսէ.

«Գողութիւններ պատահում են նաեւ Էջմիածնի վանքի պարիսպների ներսը, միաբանների սենեակներում։ Օրինակ՝ գողցեր են մի երկու միաբաններից արծաթեղէն և այլ իրեր, որ յետոյ գըտնըվեցին Ղեւոնդ վարդապետի «մօնթ»ի սենեակում՝, նրա անկողնի մէջ։ Աւրդեօք գողցողը վարդապետի «մօնթ»ն է եղել, թէ նրա միւս ծառաները, մինչեւ այժմ դեռ անյայտ է մնացել։»

—Խաչատուր Շահինեան անուն երիտասարդ մը Օախսի մէջ դաշոյնի հարուածով վիրաւոր մը սպանած է սիրային յարաբերութեան մը մէջ զայն իրեն հակառակորդ գտնելով։

—Ուրմիաէն հետեւեալ տխուր լուրը կը հաղորդեն.

«Աղքատութիւնը այս կողմերում հասաւ իր գագաթնակէտին. հազարաւոր ընտանիքներ զուրկ են նոյն իսկ ցամաք հացից. շատերը պարտքով են ցամաք հաց ճարում։ Բարանդուզ գաւառի Բաբառի գիւղի նորաբաց հայոց դըպրոցի ուսուցիչը, ժողովրդից հաց չը ստանալու պատճառով մի քանի օր քաղցած մնալուց յետոյ՝ թողեց հեռացաւ։ Գիւղացիները ասում են թէ «մեր երեխաներին անգամ չենք կարողանում կերակրել, ո՞ւր մնաց ուսուցչին, եթէ հացը, սենեակի վարձը և գըրոցի վառելիքը ձեզանից կը լինի, այնժամանակ համեցէք» . . . ։ Ժողովրդի ամենամեծ մասը, սովից չը կոտորվելու և պարսիկ խաների հարստահարութիւններից ազատվելու համար պատրաստվել է հաւատափոխ լինել՝ յուսալով որ հզօրները իրանց կը կերակրեն և կը պաշտպանեն։ Գործ մուրացողների թիւը սկսում է շատանալ։»

ՁԵԿՈՅՑ

Կը խնդրուի հետեւեալներէն որ հաճին իրենց բաժնեգինները վճարել։

Տիար Զենոբ Գապազեան, Պալչըգի գիւղ
» Եօսէֆ Հէքիմօֆ, Պալչըգ.
» Նազարէթ Աւետիսեան, Վառնա (գանձէճի)
» Յարութիւն Մուշեղեան, Ծըճօվա
» Գրիգոր Պօղոսեան, Սվիշթով («Արարատ» սրճարան)

ՍՕՆ ԻԽԹԱՐ

Կազէթամըզըն ըչինճիւ սէնէսի խիթամ պուլմայա 40 կիւն գալմըշ օլարագ, 11 այտան պէրու կազէթայը գապուլ իտուպ տէ պէտէլինի էօտէմէմիշ օլան ապօնէլէրիմիզ պօրճլարընը պու այըն խիթամընա գատար էօտէմէլի տիրլէր։ Զիրա քէօյլէրտէ վէ խարիճտէ պուլընանլարըն պիր գըսմը էլան խյֆալ տէյն իթմէմիշ օլտուղընտան կազէթանըն չըզմասը իչիւն լազըմ օլան նէվմիյէ մէսարիֆէ սըզընթը չէքիլմէքտէ տիր։

Պու կիպիլէրին պօրճլարընը Թէէխիրաթսա պրագմասը տօղրուտան տօղրու Թէչէպպիւսիմիզէ մանի օլմազ սըր։ Պինաէն ալէյհ պիզ տախի պու այըն խիթամընա գատար պէքլէյուպ, էօտէմէմիշ օլանլարըն պօրճլարընը իսիմլէրի իլէ կազէթատա պիրէր պիրէր տէրխաթըր իթտիրմէկէ մէճպուր օլաճաղըզ։

ՌԷՖԻԳ ՊԷՅ

Թիւրք հիւքիւմէթինին վառնատաքի Թիճար վէքիլի Րէֆիգ պէյ պոնտան պիր գաչ կիւն էվվէլ քէնտի սինն ու մէվգըյինա մինասիպէթսիզ պիր հարէքէթտէ պուլընմըշ տըր. չէօյլէքի,

Էն ասըլ Ծրապիզօնլը օլուպ, գըրգընլարտան գաչարագ Պուլկարիայա իլթիճա իտէն Մ. Ալաչէր Գըլըճեան իւչ կիւն մուգատտէմ պէրայի մասլահաթ իրճի Մըսթաֆա էֆէնտինին մաղազասընտա օթուրուր իքէն, Րէֆիգ պէյ գաբուտան իչէրի կիրէր վէ Գըլըճեանը կէօրմէսի իլէ պասթօնը չէքուպ, պիր գաչ տէֆա գաֆասընա էնտիրիր. Գըլըճեան իսէ «հագգընըզ եօգ վուրմայըն» տէմէքտէն պաշգա պիր մուգաբէլէտէ պուլընմազ վէ օրատա պուլընան քիմսէնէլէրին մուավէնէթի իլէ կիւճ հալ եագասընը գուրթարըր. մաղազանըն սահիպի Մըսթաֆա էֆէնտի պու նապէճա մուամէլէտէն միւթէէսսիր օլարագ, Րէֆիգ պէյի մաղազասընտան չըգարըր։

Րէֆիգ պէյին պու պէտ մուամէլէսինէ սէպէպիյէթ վէրէն նօգթա՝ մէսմուիմիզէ կէօրէ, շու ըմըշ քի, մէրգում Գըլըճեան մէմլէքէթինտէ օլան շախսի պիր մէսէլէտէն տօլայը Րէֆիգ պէյտէն շիքեաէթ էյլէմիշ, լաքին հէրնէ

սէպէպտէն իսէ կիտէմէմիշ. պունտան տօլայը Ռէֆիզ պէյ խըրս տույուպ, գահրիմանլըղընը օ եօլտա իճրա իթմիշ։

Մէսմուիմիզէ կէօրէ Գըլըճհան տօքթօրտան բարօրթ ալմըշ օլուպ մահքէմէյէ վէ լազըմ կէլէն սայիր մահէլլէրէ իսթիտաս իթմիշ տիր։

Թիւրքիատան խարիճ Պուլկարիա կիպի մէտէնի պիր մէմալիքտէ, թիւճար վէքիալէթի կիպի նազիք մէմուրիյէթտէ պուլընան պիր մէմուրըն չու հարէքէթի Թիւրքիանըն վէ թիւրքլէրին լամիր գապուլ իթմէզ պարպարլըղընա եէնի պիր տէլիլ ատտ օլընամաղ մը։

ՏԱԽԻԼԻՅԷ

Պուլկարիանըն մէարիֆ նէզարէթինտէն իսլամ մէքթէպլէրինէ իանէթէն վէրիլմիշ օլան ագճէլէրին մըգտարը պէրվէճհի աթի տիր.

Շումլու մէքթէպլէրինէ	1500	ֆր.
Բազկրատ »	1500	»
Թրնովա »	1200	»
Ֆիլիպէ »	3000	»
Սիշթօֆ »	800	»
Նիքօբօլ »	400	»
Լոմ. Բալ. »	600	»
Ռուսճուգ »	800	»
Թ. Բազարճըգ »	800	»
Խաս-քէօյ »	900	»
Վիտին »	900	»
Եէնի Բազար »	600	»
Ս. յոս »	400	»
Գարնապատ »	400	»

Իբրիֆագը պէյանընա կէօրէ, տահա պաշգա գազալարա տախի վէրիլիր իմիշ։

— Եօրթու կիւնլէրի իսլամլարա տիւքեանլարընը աչմագ իչիւն հիւքիւմէթին մուվագգաթէն մէզունիյէթ վէրմիշ օլտըղընը Սօֆիատա վէ Ֆիլիպէտէ Նէչը օլընան թիւրք կազէթալարը եաղմըշ տըր։

ՄԱՔԷԹՈՆԻԱ

Ռուս խաճիյէ նազըրը Մ. Մուրավիէֆին կէչէնլէրտէ Վիէննատա Գոնգ Կոլուխովսքի իլէ միլագաթը էնասընտա Պալգան էյալէթլէրին ահվալը հաղրբէսինի (սթաթիքիս) թախֆիֆ իթմէք, վէ Մաքէթոնիատա իսլամլարընը խըրիսթիյանլարա գարշը իճրա իթտիքլէրի ույկունսըզլըգլար սէպէպի իլէ կիթտիքճէ արթմագտա օլան իխթիլալտան Մաքէթոնիալըլարընը պախթընը թէմին էյլէմէք վէ Պուլկարիանըն վէ Սերպիանըն Պապը Ալիյէ գարշը բըրօթէսթլէրինէ գուվվէթ վէրմէք վէ իգթիզաի հալ՝ Պէրլին ահտնամէսինտէ մուգարրէր օլընընը կիպի Մաքէթոնիա իչիւն պիր օթոնոմի թէշքիլ իթմէք պապընտա տիկէր տէվլէթլէր իլէ մուխապէրէյէ կիրիշմէք իչիւն գարար վէրիլմիշ օլընընը Վիէննատան թաւսա պիլտիրիյօրլար։

ԿԻՐԻՏ

Օսմանլը սանճակը Կիրիտին եալընըզ Սիւտանամ մահէլինէ տիկէր տէվլէթլէրին պանտէրալարը իլէ թէմէվվիճ (ծածանիլ) իտուպ, ատանընը պաշգա ճիհէթլէրինտէ ասլա կէօրիւնմէյէճէք տիր։

Կիրիտէ տէօրթ տէվլէթլէրտէն մուվագգաթէն վէրիլէճէք պիրէր միլիոն ֆրանգ իչիւն, Իթալիա քէնտի վէրէճէկի պիր միլիոնընը թէտարիքինի պիւտճէ գօմիսիօնընը միւղաքէրէսինէ իհալէ իթմիշ տիր։

Բրէնս Եօրկինին Կիրիտէ կիթմէմէսի իչիւն Լիվատիայա Զարա թէպրիքէ կիտէն օսմանլը մուրախասլարընը պա խուսուս Թուրհան բաշանընը չալըշմասը պօշա չըգմըշ օլտըղը կիպի, կէչէն կիւն Սուլթանընը թէլէկրաֆլէ Զարա իթտիկի ըլճա տախի սէմէրէսիզ գալտը։ Զար մէղքիւր թէլէկրաֆա ճէվապէն՝ Բրէնս Եօրկինին Կիրիտէ կիթմէմէսի միւմքինսիզ օլընը պիլտիրմէքլէ պէրապէր, Սուլթան իլէ պէյինլէրինտէ տօսթլըգ պագը օլտըղընը վէ Կիրիտէ Սուլթանըն հաքիմիյէթ նամընը Եօր. կիոս մուհաֆազա իտէճէկինի պէյան իթմիշ տիր։

Շիմտիլիք Եօրկինին Կիրիտէ մէմուրիյէթի 3 սէնէ իչիւն գարարլաշմըշ տըր։

ՄԻԹԻՆԷՎԻԷ

Ռուսիանընը պաղը էյալէթլէրինտէ գըթլըգ ղուհուր իթմիշ օլմաղլէ, Ռուս Կարմիր-Խաչ շիրքէթի 200000 բուպլի թախսիս իթտիքտէն մաատա, իլանաթլար իլէ գահէթզատէկեանը իչիւն իանէ թէճէմմիւ իթմէկէ մուպաշէրէթ էյլէմիշ տիր։

— Իզմիրտէն վիրուտ իտէն պիր մէքթուպ պիլտիրիյօր.

«Կիրիտտէն հէր կիւն վաբօրլարլէ բէք չօգ իսլամ մուհաճիրլէր կէլմէքտէ տիր. պունլար Կիրիտտէ եաբամատըգլարը ֆէնալըղը պուրատա իճրա իթմէք իսթէյօրլար. էվվէլքի կիւն պիր գաչ կիրիտլիլէր պըչագլարլէ տօգուզ բում եարէլէտիլէր. հիւքիւմէթ տէրհալ գարըշըգլըղընը էօնիւնիալտը. ինկիլիզ գօնսօլոսը թէլէկրաֆ չէքիւպ հարպ վաբօրլարը իսթէմիշ տիր։»

— Բէթրս կուրկտան ալընան մալիւմաթա պինաէն թէրքի սիլահ իչիւն թէճէմմիւ օլընաճագ գօնֆէրանստա վէրիլէճէք գարարլարընը պիրիսի տէ՝ պիր վուգուաթ ղուհուրինտէ հէր պիր տէվլէթ բօլիսիասընընը պիրպիրլէրի իլէ տօղրուտան տօղրու մուխապէրէ իտէպիլմէսի օլաճագ տըր, եանի խարիճիյէ նէզարէթլէրին ուղուն ուղատիյէ մուամէլէլէր իճրասը իչիւն վագըթ ղայպ իթմէմէք։

— Նատէժտա նամ եէնի պուլկար վաբօրընը Զանագ գալէ պօղազընտան կիրմէսի իչիւն Մ. Մարգօֆընը մէէղուէիյէթ թալեպ իթմէսի իւզէրինէ, Թաւնընը եաղաբղընա նազարէն, 15 կիւն ուղուն միւղաքէրէլէրտէն սօնրա Նիհայէթ Սուլթանընը պիր իրատէսի սուտուր իտուպ, վաբօրընը պօղազլարտան կէչմէսինէ մէզունիյէթ վէրիլտի։ Ֆագաթ պու թէէխիրաթտան ըՍթանպոլ Պուլկարիա մասլահաթկիւզարը Մ. Մարգօֆընը ճանը սըգըլարագ Պապը Ալիյէ գաթիէն պիր միւրաճաաթլէ, էկէր Նատէժտայա մէզունիյէթ տախի վերմէղ իսէնիլ՝ թէքրար պօղազտան կիրէճէք տիր վէ էկէր գալէլէրտէն անը մէնն իթմէք իսթէնիլիր իսէ մէսուլիյէթի սիղէ այիտ օլաճագ, տէմիշ տիր։

Կէչէն Նիւսխէմիզտէ մէզքիւր սէֆինէնին իսմինի Նատէժտա (իմիտ) եաղաճագ էէրտէ սէհվէն կրաժտանիլ եաղմըշ ըտըգ։

Отговорникъ М. Сконовъ
Печатница "Взаимность"—Варна

Първа Българска-Лотария

ГЛАВНИ ПЕЧАЛБИ т. е: 500,000, 300,000, 200,000, 100,000, 50,000, 45,000, и проч.

ЗЕФИР.

ДАВИД КОЛЕКЕ & С-ие, ГУРАЙЕРБАНКЪ

СОФИЯ, ТЪРГОВСКА УЛИЦА № 4
ТЕЛЕФОНЪ № 43
АДРЕСЪ ЗА ТЕЛЕГРАММИ БРАЙЕРБАНКЪ

РУССЕ, ПЛОЩАДЬ ЦАРЬ БОРИСЪ.
ТЕЛЕФОНЪ № 43

Първо печално тегление
тоже на 10 й Декемврий т. г.

До когато се намира въ депо
Цъли лозове злат. лева 10.—
Половини „ „ „ 5.—
Четвърти „ „ „ 2.50
Една осма „ „ „ 1.25